ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՊԱՐՏԱՏՈՄՍԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

ՀՀ օրենսդրությամբ հստակ կարգավորված չէ պարտատոմսով հավաստվող իրավունքների իրավական բնույթը և դրանով միջնորդավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքը: Սույն հոդվածով հեղինակը քննարկում է պարտատոմսի հասկացությունը, ընդգծում է, որ, բացի գույքային իրավունքներից, պարտատոմսը կարող է ընձեռել նաև ոչ գույքային իրավունքներ: Պարտատոմսով հավաստվող գույքային հարաբերությունները իրենց բնույթով փոխառության հարաբերություններ են, և հեղինակը առաջարկում է, որ պարտատոմսը տիրապետողի և այն թողարկողի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառվեն փոխառության հարաբերությունները կարգավորող կանոնները, սակայն եթե այլ հատուկ կարգավորում նախատեսված չէ օրենքով կամ պարտատոմսի թողարկման պայմաններով:

Հիմնաբառեր՝ *պարտատոմս, փոխառություն, գույքային իրավունքներ, ոչ գույքային իրավունքներ:*

Քաղաքացիական շրջանառության մեջ արժեթղթերը՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների օբյեկտներ, ունեն մի շարք տնտեսական և իրավական գործառույթներ, և ներկայիս տնտեսությունը հնարավոր չէ պատկերացնել առանց արժեթղթերի: Դրանց դերը, կախված տեսակից, կարող է տարբեր լինել. սկսած փոխառության հետ կապված հարաբերությունների միջնորդավորումից (պարտատոմս, մուրհակ) մինչև ապրանքաշրջանառության աջակցությունը (պահեստային վկայագիր, կոնոսամենտ և այլն) և կապիտալի ներգրավումը (բաժնետոմս, ներդրումային ֆոնդի փայ և այլն): Արժեթուղթը կարող է հավաստել ինչպես պարտավորական իրավունքներ, այնպես էլ կորպորատիվ և իրային իրավունքներ[1]:

Պարտատոմսը ներդրումային (ինվեստիցիոն) արժեթուղթ է, որի հիմնական նպատակը թողարկողի համար փոխառու միջոցների ներգրավումն է, իսկ ներդրողի համար՝ տոկոսների կամ գույքային այլ համարժեքի տեսքով շահույթի ստացումը[2]: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ *պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:* Քաղաքացիական օրենսգրքի՝ պարտատոմսի հասկացությունը իր մեջ պարունակում է պարտատոմսին հատուկ ներդրողի հիմնական գույքային իրավունքները՝ ստանալ պարտատոմսի անվանական արժեքը (կամ գույքային այլ համարժեք), ինչպես նաև անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունք: Պարտատոմսի անվանական արժեքը (principal) այն գումարն է, որը թողարկողը պարտք է վերցնում ներդրողից[3], և որի նկատմամբ են հաշվարկվում որպես եկամուտ վճարվող տոկոսները: Ավելի պարզ ասած՝ պարտատոմսի անվանական արժեքը այն գումարն է, որը սահմանված է պարտատոմսի թողարկման որոշմամբ և, որպես կանոն, տրամադրվում է պարտատոմսի սեփականատիրոջը դրա մարման ժամանակ: Ընդ որում՝ պարտադիր չէ, որ պարտատոմսը վաճառվի անվանական արժեքի գնով. այն կարող է վաճառվել և՛ դրանից ցածր գնով (դիսկոնտի դեպքում), և՛ դրանից բարձր գնով, սակայն ամեն դեպքում տոկոսները հաշվարկվում են անվանական արժեքի նկատմամբ և վերջնական պարտատոմսի մարում տեղի է ունենում անվանական արժեքով: Պարտատոմսի հասկացությամբ սահմանված է նաև, որ պարտատոմսը տիրապետողը կարող է անվանական արժեքի փոխարեն ստանալ թողարկողից գույքային այլ համարժեք: Գույքային այլ համարժեքի օրինակ կարող է լինել Ռուսաստանում գործող ոսկե սերտիֆիկատները, որոնք հանդիսանում են պետական պարտատոմսեր և պարտատոմսի մարման դեպքում ներդրողը ստանում է պետական ստանդարտացված ձուլակտոր[4]: Գույքային այլ համարժեքի հետ գործ ունենք նաև փոխարկվող պարտատոմսերի դեպքում, երբ պարտատոմսի թողարկման պայմաններով նախատեսված է, որ դրանք կարող են փոխարկվել թողարկող ընկերության բաժնետոմսերի: Արդյունքում պարտատոմսի սեփականատերը ստանում է ոչ թե պարտատոմսի անվանական արժեքը, այլ դրան համարժեք ընկերության բաժնետոմս:

Բացի անվանական արժեքից՝ պարտատոմսի

www.journal.lawinstitute.am

սեփականատերը իրավունք ունի ստանալու նաև անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ: Տոկոսը կամ այլ գույքային իրավունքը հենց այն օգուտն է, որը հիմնականում շահագրգռում է ներդրողին գնել այդ պարտատոմսը: Պարտատոմսի սեփականատերը, բացի տոկոսից, կարող է ունենալ նաև այլ գույքային իրավունքներ, որոնք պայմանավորված են թողարկվող պարտատոմսի տեսակից և թողարկման պայմաններից: Օրինակ՝ զեղչատոկոսային (դիսկոնտային) պարտատոմսերի դեպքում ներդրողը չի ստանում տոկոսներ, այլ պարտատոմսը գնում է անվանական արժեքից ցածր գնով, իսկ պարտատոմսի մարման ժամանակ ստանում է անվանական արժեքը[5]:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանափակվում է միայն պարտատոմսի սեփականատերերի գույքային իրավունքներ ունենալու հնարավորության նախատեսմամբ՝ անտեսելով պարտատոմսերի սեփականատերերի ոչ գույքային իրավունքները: Պարտատոմսերի սեփականատերերը մի շարք դեպքերում ունեն նաև ոչ գույքային իրավունքներ: Օրինակ՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ թողարկողը պարտավոր է կազմել, Կենտրոնական բանկ ներկայացնել և իր ինտերնետային տնային էջում հրապարակել այդ օրենքով սահմանված կարգով հիփոթեքային պարտատոմսերի թողարկման առնչությամբ կազմված եռամսյակային հաշվետվություններ, որոնցում պարտադիր ներառվող տեղեկությունները սահմանվում են օրենքով: Այս դեպքում պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը պարտատոմսերի սեփականատերերի իրավունքն է, որից էլ կարող է կախված լինել վերջիններիս հետագա գործողությունները. վաճառել պարտատոմսերը կամ օգտվել պարտատոմսերի ընձեռած այլ իրավունքներից: Պետք է ընդգծել, որ մի շարք երկրների օրենսդրություններ պարտատոմսերի սեփականատերերին, բացի գույքային իրավունքներից, ընձեռում են նաև ոչ գույքային իրավունքներ: Այսպես՝ Անգլիայում պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալ թողարկողի հաշվապահական հաշվեկշիռը, իսկ արտակարգ դեպքերում նույնիսկ կարող են ստանալ ընկերության բարձրագույն կառավարման մարմնում քվեարկության իրավունք, Բելգիայում՝ մասնակցել բաժնետերերի ժողովին և ստանալ տեղեկատվություն ժողովի վերաբերյալ, Իսպանիայում և Շվեյցարիայում՝ ներկայացուցչի միջոցով մասնակցել ընկերության կառավարման մարմինների աշխատանքին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով[6], Ռուսաստանում՝ պարտատոմսի սեփականատերերը իրավունք ունեն գումարել պարտատոմսերի սեփականատերերի ժողով, որը կայացնում է մի շարք որոշումներ կապված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների հետ, ինչպես նաև նախատեսված է պարտատոմսերի սեփականատերերի ներկայացուցչի ինստիտուտը, որին 2016թ. հուլիսի 1-ից թողարկողը պարտավոր է ներգրավել օրենքով նախատեսված դեպքերում[7]: Այսպիսով՝ օրենքով կամ պարտատոմսի թողարկման պայմաններով պարտատոմսերի սեփականատերերի համար կարող են նախատեսվել մի շարք ոչ գույքային իրավունքներ, ուստի գտնում ենք, որ պարտատոմսի հասկացությունը սահմանելիս անհրաժեշտ է նաև ընդգծել, որ բացի գույքային իրավունքներից՝ պարտատոմսերի սեփականատերերը կարող են ունենալ նաև ոչ գույքային իրավունքներ, այլապես առկա կարգավորումից բխում է, որ պարտատոմսերով կարող են հավաստվել միայն գույքային իրավունքներ: Հետևաբար առաջարկում ենք փոփոխել Քաղաքացիական օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հետևյալ կերպ. *«Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ, ինչպես նաև օրենքով կամ պարտատոմսի թողարկման պայմաններով նախատեսված դեպքերում՝ նաև ոչ գույքային իրավունքներ»:*

Պարտատոմսը իրենից ներկայացնում է փոխառու միջոցների ներգրավման գործիք: Այլ կերպ ասած՝ պարտատոմսը արժեթուղթ է, որով հավաստվում են փոխառությամբ պայմանավորված հարաբերություններ արժեթուղթը տիրապետողի և այն թողարկող անձի միջև[8]: Բայց արդյոք պարտատոմսը հանդիսանում է փոխառություն, կամ, այլ կերպ ասած, Քաղաքացիական օրենսգրքով սահմանված փոխառության գլխի կանոնները կիրառելի են պարտատոմսերի նկատմամբ, թե ոչ: Այս հարցի պատասխանը ՀՀ օրենսդրությամբ միանշանակ չէ: Քաղաքացիական օրենսգիրքը չի սահմանում, որ պարտատոմսի սեփականատիրոջ և թողարկողի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառելի են փոխառության հարաբերությունները կարգավորող գլուխ 46-ի կանոնները: Սակայն Քաղաքացիական օրենսգիրքը մի շարք դեպքերում սահմանում է նորմեր, որոնցից բխում է, որ պարտատոմսերով հավաստվում են փոխառության հետ կապված հարաբերություններ: Այսպես՝ Քաղաքացիական օրենսգրքի 885-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական փոխառության պայմանագիրը կնքվում է փոխառուի թողարկած *պետական այն պարտատոմսերը կամ պետական այլ արժեթղթերը փոխատուի կողմից ձեռք բերելու միջոցով*, որոնք հավաստում են դրամական միջոցները, այլ գույքը, սահմանված տոկոսները կամ այլ գույքային իրավունքները փոխառության թողարկման պայմաններով նախատեսված ժամկետներում փոխառուից ստանալու փոխատուի իրավունքը: Բացի այդ՝ Քաղաքացիական օրենսգրքի 886.1.-րդ հոդ-

վածը սահմանում է, որ *փոխառության պայմանագրով, այդ թվում՝ պարտատոմսերի թողարկման և վաճառքի պայմաններով*, կարող է նախատեսվել, որ փոխառուի լուծարման դեպքում փոխատուի պահանջները ենթակա են բավարարման փոխառուի մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո (ստորադաս փոխառություն): Այս երկու նորմերը թույլ են տալիս եզրակացնել, որ ամեն դեպքում Քաղաքացիական օրենսգիրքը ճանաչում է այն փաստը, որ պարտատոմսով հավաստվում են փոխառության հետ կապված հարաբերություններ: Արդյո՞ք այս ամենը բավարար է, որպեսզի պարտատոմսի սեփականատիրոջ և թողարկողի միջև հարաբերություններում կիրառվեն փոխառության վերաբերյալ նորմերը: Այլ կերպ ասած՝ պարտատոմսը թողարկողի և դրա գնորդի միջև հարաբերություններում պետք է կիրառվեն փոխառության այնպիսի կանոններ, ինչպիսիք են, օրինակ, փոխառության տոկոսներին վերաբերող կանոնները (Քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդված), փոխառության պայմանագիրը խախտելու (Քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդված) կամ փոխառուի պարտավորության ապահովման կորստի հետևանքների վերաբերյալ նորմերը (Քաղաքացիական օրենսգրքի 883-րդ հոդված) և այլն: Օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի համաձայն՝ եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս (տարաժամկետ), ապա փոխառուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնել փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին: Այս կանոնը կիրառելով՝ արդյո՞ք հնարավոր է վաղաժամկետ պահանջել պարտատոմսի անվանական արժեքը և հասանելիք տոկոսներ, եթե թողարկողը խախտում է արժեկտրոնային պարբերական վճարները վճարելու պարտականությունը:

Այս խնդրի կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը 2012թ. հունիսի 12-ին թիվ 5 պարզաբանմամբ[9] պատասխանելով այն հարցին, թե արդյոք կարող են թողարկվել ՀՀ-ում կարգավորվող շուկային թույլատրված կամ թույլատրման ենթակա արտարժույթով արտահայտված պարտատոմսեր, ինչպես նաև դրանց դիմաց արտարժույթով իրականացվել վճարումներ, նշել է, որ պարտատոմսերի տեղաբաշխումն իրենից ներկայացնում է փոխառության ներգրավման ձև և ՀՀ ԿԲ խորհուրդը *արժութային կարգավորման տեսանկյունից տարբերություն չի դնում պարտատոմսերի և փոխառությունների միջև* և պարտատոմսերի համար կիրառելի է համարում «Արժութային վերահսկողության և արժութային կարգավորման մասին» ՀՀ օրենքով[10] փոխառությունների համար նախատեսված կարգավորումները: ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը գտել է, որ միայն կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ ազդագրի («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն ազդագրի հրապարակման պահանջից բացառությունների և/կամ ոչ հրապարակային թողարկման դեպքում՝ թողարկման պայմանների) համաձայն՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման ենթակա պարտատոմսերի արտահայտումը արտարժույթով (ներառյալ՝ անվանական արժեքի նախատեսումը), այդ պարտատոմսերի ձեռքբերման ժամանակ վճարումները և այդ պարտատոմսերի մարումը կարող են կատարվել արտարժույթով, իսկ մնացած պարտատոմսերը՝ ոչ: Ընդ որում՝ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են փոխառությունների (վարկերի) համար «Արժութային վերահսկողության և արժութային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոնները: Այսպիսով՝ ՀՀ կենտրոնական բանկը գտել է, որ պարտատոմսը փոխառության ներգրավման ձև է և դրա թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառելի են կոնկրետ օրենքով նախատեսված փոխառության վերաբերյալ կանոնները: Ի հակադրություն վերը նշվածին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2014թ. մայիսի 8-ին թիվ ԵԱՔԴ/1459/02/10 քաղաքացիական գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «հետապնդվող նպատակի առումով ինչպես փոխառությունը, այնպես էլ պարտատոմսը փոխառու միջոցների ներգրավման ձևեր են: Մասնավորապես՝ թե՛ փոխառության պայմանագրի և՛ թե պարտատոմսի պարագայում խոսքը գնում է ապրանքային շրջանառության մի մասնակցի կողմից մյուսին հատուցմամբ և վերադարձնելու պայմանով դրամ կամ այլ գույք տալու մասին: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ ապրանքային շրջանառության մասնակիցների միջև փոխառության տնտեսական ընդհանրության առկայության պայմաններում տարբեր են փոխառության պայմանագրի և պարտատոմսի իրավական ձևակերպումները և կարգավորումները: Այսպես, օրինակ, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է իրավահարաբերության կողմերի միջև, ապա պարտատոմսը թողարկում է էմիտենտը. ընդ որում, եթե փոխառության պայմանագրի կողմերը՝ փոխատուն և փոխառուն, հայտնի են ի սկզբանե, ապա պարտատոմսի դեպքում երբեմն հայտնի չէ, թե ով է լինելու դրա տիրապետողը, եթե փոխառության պայմանագիրը կնքվում է հասարակ գրավոր ձևով, ապա օրենքով սահման-

ված են պարտատոմսի որոշակի պարտադիր վավերապայմաններ և այլն: *Հետևաբար, փոխառության պայմանագիրը և պարտատոմսը չեն կարող նույնացվել քաղաքացիաիրավական կարգավորման էական տարբերությունների պատճառով»*[11]: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև պարտատոմսը և փոխառության պայմանագիրը համարվում են փոխառու միջոցների ներգրավման ձևեր, այնուամենայնիվ՝ դրանք չեն կարող նույնացվել քաղաքացիաիրավական կարգավորման էական տարբերությունների պատճառով:

Տարբեր երկրների օրենսդրությունները նույնպես չեն հստակեցնում՝ պարտատոմսը ամեն դեպքում հանդիսանո՞ւմ է փոխառության հավաստում, թե՞ ոչ: Օրինակ՝ Գերմանիայի օրենսդրությամբ պարտատոմսը ճանաչվում է որպես փաստաթուղթ, որի թողարկողը պարտավորվել է վճարել փաստաթղթում խոստացված գումարը այն տիրապետողին[12]: Ֆրանսիայի առևտրային օրենսգրքի համաձայն՝ պարտատոմսերը շրջանառության ենթակա արժեթղթեր են, որոնք մեկ թողարկման ներքո տրամադրում եմ նույն պարտավորական իրավունքները նույն անվանական արժեքի նկատմամբ[13]:

Սակայն Ռուսաստանում գործող քաղաքացիական օրենսգրքի 816-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում, փոխառության պայմանագիրը կարող է կնքվել պարտատոմսի թողարկման և վաճառքի եղանակով: *Պարտատոմս թողարկողի և այն տիրապետողի միջև հարաբերությունները կարգավորվում են փոխառության պարագրաֆի նորմերով այնքանով, որքանով այլ բան սահմանված չէ օրենքով կամ օրենքով սահմանված կարգով*[14]:

Քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածը սահմանում է, որ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Տվյալ դեպքում պարտատոմսի վաճառքի պայմանագրով մեկ կողմը (գնորդը) մյուս կողմին (թողարկողին) տրամադրում է որոշակի գումար հետագայում պարտատոմսի անվանական արժեքը և (կամ) տոկոս կամ գույքային այլ համարժեք ստանալու պայմանով: Իսկ փոխառության կանոնների համաձայն փոխառուին որոշակի դրամական գումար տալը կարող է հավաստվել ցանկացած փաստաթղթով, ինչը այս դեպքում կարող է հանդիսանալ պարտատոմսը: Գրականության մեջ նույնպես առկա է այն կարծիքը, որ պարտատոմսը, ինչպես նաև մուրհակը, կարող են հանդիսանալ այն փաստաթղթերը, որոնք հավաստում են փոխառության հարաբերությունների առկայությունը[15]: Քաղաքացիական օրենսգրքի 146-րդ հոդվածի համաձայն՝ արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է: Այսինքն՝ պարտատոմսի՝ որպես արժեթղթի էությունն է հանդիսանում գույքային, տվյալ դեպքում՝ պարտավորական, իրավունքներ հավաստելը: Ուստի գտնում ենք, որ պարտատոմսը պետք է հանդիսանա փոխառության հարաբերությունների և փոխառության պայմանագրի առկայության փաստը հավաստող փաստաթուղթ: Սակայն, այս դեպքում տարբեր է փոխառության հարաբերությունների ծագման հիմքը: Ինչպես գրում է Օ. Վ. Իշուտինան, պարտատոմսով հավաստված փոխառության պարտավորությունը ծագում է արժեթղթի առուվաճառքի պայմանագիր կնքելու, ոչ թե փոխառության պայմանագրի արդյունքում[16]: Իսկ Ե. Բ. Ռաղչենկոն նշում է, որ պետական պարտատոմսի առուվաճառքի պայմանագիրը դրա առաջնային տեղաբաշխման ժամանակ պետք է համարել փոխառության պայմանագրի հատուկ տարատեսակ և դրա կնքման ժամանակ պետք է կիրառել քաղաքացիական օրենսգրքի փոխառության վերաբերյալ կանոնները[17]: Գտնում ենք, որ պարտատոմսի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ չի կարելի կիրառել փոխառության պայմանագրի կանոնները, քանի որ դրանք իրենց բնույթով էականորեն տարբեր նշանակություն և կարգավորում ունեն. փոխառության հարաբերությունները բխում են հենց պարտատոմսի էությունից, դրա գործառույթներից: Փոխառության հարաբերությունները այս դեպքում առաջանում են պարտատոմսի առուվաճառքի արդյունքում[18]: Նշենք, որ փոխառության հարաբերությունները կարող են կարգավորել միայն թողարկողի և պարտատոմս տիրապետողի հարաբերությունները՝ կապված գումարի և տոկոսների փոխառության ու վերադարձման հետ, բայց ոչ պարտատոմսի գնման հետ կապված հարաբերությունները:

Այսպիսով, գտնում ենք, որ պարտատոմսի թողարկողի և դրա տիրապետողի միջև առաջացող հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվեն փոխառության վերաբերյալ կանոնները: Սակայն այդ կանոնները պետք է կիրառվեն պարտատոմսերից բխող հարաբերությունների նկատմամբ

միայն լրացուցիչ կարգով, եթե այլ բան սահմանված չէ օրենքով և պարտատոմսի թողարկման պայմաններով, քանի որ պարտատոմսերը ունեն իրենց կարգավորման առանձնահատկությունները, և պետք է առաջնություն տրվեն այդ հատուկ կարգավորումներին, որոնց բացակայության պայմաններում նոր միայն կիրառվեն փոխառությանը վերաբերող կանոնները: Օրինակ՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի[19] 8-րդ հոդվածի համաձայն, եթե ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոց հանդսացող ակտիվները դուրս են գրվում ապահովման միջոցների ռեգիստրից, ապա թողարկողը պարտավոր է նույն աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել այդ ակտիվները այլ ակտիվներով, իսկ Քաղաքացիական օրենսգրքի 883-րդ հոդվածի համաձայն՝ փոխառության գումարը վերադարձնելու ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման այնպիսի հանգամանքներում, որոնց համար փոխատուն պատասխանատվություն չի կրում. վերջինս իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Այս դեպքում ակնհայտ է, որ պետք է գերակայություն տալ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորման, և փոխառության համար սահմանված ընդհանուր նորմերը պետք չէ կիրառել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքով կարգավորել այս հարցը՝ սահմանելով, որ պարտատոմսով հավաստվում են կողմերի միջև փոխառության հարաբերությունների առկայությունը, և դրա հետ կապված հարաբերություններում կիրառվում են փոխառության հետ կապված Քաղաքացիական օրենսգրքի նորմերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պարտատոմսի թողարկման պայմաններով: Այսպես՝ Քաղաքացիական օրենսգրքի 154-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել 3-րդ մասով և շարադրել հետևյալ կերպ. «*3. Պարտատոմսով հավաստվում է այն թողարկողի և տիրապետողի միջև փոխառության հարաբերությունների առկայությունը, և դրանց նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46-րդ գլխի՝ փոխառության մասին կանոնները, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ պարտատոմսի թողարկման պայմաններով:*»

---

[1] Տե՛ս Суханов Е. А. Российское гражданское право: Учебник: В 2 т. Т. I: Отв. ред. Е. А. Суханов. 4-е изд., стереотип. Москва: Статут, 2015, С. 322.

[2] Տե՛ս Корчагин Ю. А. Рынок ценных бумаг. 2-е изд., доп. и перераб. Ростоб-на-Дону: Феникс, 2008. С. 42.

[3] Տե՛ս Берзона Н. И. Рынок ценных бумаг: Учебник для бакалавров. 3-е изд., Москва, Издательство Юрайт, 2013, С. 114.

[4] Տե՛ս Постановление Правительства РФ от 27.07.1998 N 861 “О Генеральных условиях эмиссии и обращения государственных облигаций, погашаемых золотом” (https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19637/04e5083825bea0ac15e3822d85bb52be4ffa0d3f/)

[5] Տե՛ս Аюпов А.А., Иванов М.Е., Белобородова М.А.. Рынок ценных бумаг: учебное пособие. Казань: “Отечество”, 2013, С. 29.

[6] Տե՛ս Майфат А.В. Гражданско-правовые конструкции инвестирования: монография, Москва. Волтерс Клувер, 2006. С. 75-76.

[7] Տե՛ս Федеральный закон от 22.04.1996 N 39-ФЗ (ред. от 30.12.2015) “О рынке ценных бумаг”, գլուխ 6.1 (https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10148/):

[8] Տե՛ս Դավթյան Տ.Մ. Արժեթղթերով գործառնություններ, Երևան: Տիգրան Մեծ, 2003. էջ 56:

[9] Տե՛ս https://www.cba.am/AM/lagovernmentalclarificationscouncil/parz%205.pdf :

[10] Ընդունվել է 24.11.2004թ., ուժի մեջ է մտել 28.06.2005թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1456 ՀՕ-135-Ն:

[11] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. մայիսի 8-ին կայացված որոշումը թիվ ԵԱՔԴ/1459/02/10 քաղաքացիական գործով՝ ըստ Նարինե Նալբանդյանի հայցի ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի, երրորդ անձինք Հրաչ-Ներսես Կապրիելյանի, Վարդան Սիրմաքեսսի՝ 04.08.2010 թվականի ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

[12] Տե՛ս Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրք՝ հրատարակված 2 հունվարի 2002, հոդված 793 (http://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p3405):

[13] Տե՛ս Ֆրանսիայի առևտրային օրենսգիրք, հոդված L. 228-38, (https://www.legifrance.gouv.fr/Traductions/en-English/Legifrance-translations):

[14] Տե՛ս ՌԴ քաղաքացիական օրենսգիրք (մաս 2) 26.01.1996 N 14-ԶԻ (http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=182037):
[15] Տե՛ս Բարսեղյան Տ., Հայկյանց Ա., Ղարախանյան Գ., Մեղրյան Ս. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս. Երկրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով.- Երևանի պետ. համալս. Երևան: ԵՊՀ հրատ., 2008. էջ 402:
[16] Տե՛ս Ишутина О.В. Государственные и муниципальные ценные бумаги: Вопросы правовой идентификации: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2004.
[17] Տե՛ս Радченко Е. Б. Государственные ценные бумаги России и США: Автореф. дис. ...канд. юрид. наук. Москва, 2003.
[18] Տե՛ս Ашиткова Т. В., Бут Н. Д., Викторов И. С., Звягинцев Д. А., Хаснутдинов А. И. Рынок ценных бумаг: правовое регулирование. Москва: Олма-Пресс, 2002. С. 60.
[19] Ընդունվել է 26.05.2008թ., ուժի մեջ է մտել 12.07.2008 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2008.07.02/41(631) Հոդվ.675, ՀՕ-97-Ն:

Рафик Григорян
Аспирант кафедры гражданского права
юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Определение облигации и ее правовая природа

Законодательство РА четко не регулирует правовой характер прав от облигаций и применимого права к отношениям, возникшим из облигаций. Автор статьи обсуждает определение облигаций, подчеркивает, что в дополнение к имущественным правам облигация может также давать неимущественные права. Отношения, вытекающие из облигаций являются заемными отношениями по своей природе, и автор предполагает, что отношения между держателем облигаций и эмитентом должны регулироваться правилами займа, если иное специальное регулирование не внесено для облигаций законом или условиями выпуска облигаций.

Ключевые слова: *облигация, заем, имущественные права, неимущественные права.*

Rafik Grigoryan
Post-Graduate student of Faculty of Law Chair
of Civil Law Yerevan State University

SUMMARY

The definition of bond and its legal nature

The legislation of RA doesn't not clearly settle the legal nature of the rights from bonds and the applicable law to the relations emerging from bonds. The author of the article discusses the definition of a bond, stresses that in addition to property rights the bond may also enable non-property rights. The relationships emerging from bonds are loan relationships by their nature and the author suggests that the relationships between the bondholder and the issuer should be regulated by the rules of the loan, if other special regulation is not settled for bonds by law or by the conditions of bond issuance.

Keywords: *bond, loan, property rights, non-property rights.*